ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«10» 01 2025 թ. Թիվ 8-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 93-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 93-Լ հրամանի 1-ին կետով հաստատված N 1 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) հավելվածի 27-րդ կետում «օրերի քանակը» բառերից հետո լրացնել «, իսկ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում՝ նաև մեկնման երկիրը» բառերը:

2) հավելվածի 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«29. Ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով: Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց տվյալ աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մասերից մեկը՝ 15 աշխատանքային օր տևողությամբ, տրամադրվում է տվյալ աշխատանքային տարվա որևէ եռամսյակի ընթացքում, իսկ ամենամյա

արձակուրդի մնացած մասերը (մաս-մաս)՝ յուրաքանչյուր անգամ մինչև 10 աշխատանքային օր տևողությամբ մյուս եռամսյակների ընթացքում, բացառությամբ առանձին դեպքերի:»:

2. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 2023 թվականի նոյեմբերի 30-ից հետո ընկած ժամանակահատվածում աշխատանքային տարվա չօգտագործված ամենամյա արձակուրդը կամ դրա մասերը տրամադրվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածով սահմանված ժամկետներում՝ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված դրույթների համաձայն:

3. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ